ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

ՀՐԱՄԱՆ № 116

«16» 02 2020 թ. ք. Երևան

ԱՐՄԵՆ ԳԱՌՆԻԿԻ ՕՍԵՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Արմեն Օսեյանը 2016 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև 2018 թվականի մայիսի 10-ն աշխատել է որպես Արմավիրի մարզի դատախազության դատախազ, իսկ 2018 թվականի մայիսի 10-ից մինչ օրս Արմեն Օսեյանը զբաղեցնում է Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնը:

Արմեն Օսեյանն Արմավիրի մարզի դատախազության աշխատակիցների միջև պարտականությունների բաշխում կատարելու մասին մարզի դատախազի կարգադրության համաձայն՝ հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացնում մարդու և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով նախապատրաստվող նյութերով ու հարուցված քրեական գործերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, այնուհետև այդ քրեական գործերով պաշտպանում է մեղադրանքը դատարանում: Իր դատավարական ղեկավարման ներքո քննված քրեական գործերով, օրենքով սահմանված ժամկետում և կարգով, ստուգում է դատավճիռների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, կազմում եզրակացություններ, բողոքարկում է դատարանի օրինական ուժի մեջ չմտած անօրինական դատավճիռները և որոշումները, մասնակցում բողոքների քննարկմանը: Մարզի դատախազի հանձնարարությամբ կատարում է ամփոփումներ և ուսումնասիրություններ: Իր իրավասությանը վերապահված հարցերով քննարկում է անձանց և կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումներն ու բողոքները, իրականացնում քաղաքացիների ընդունելություն՝ դատախազության կանոնակարգով սահմանված կարգով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացնում է իր դատավարական ղեկավարման ներքո գտնվող քրեական

գործերով անցնող քաղաքացիների ընդունելություն: Մարզի դատախազությունում հսկողություն է իրականացնում հանցագործություն կատարած անձին բացահայտած չլինելու և մեղադրյալների հետախուզման մեջ գտնվելու պատճառով կասեցված քրեական գործերի քննության ընթացքի և այդ գործերով ոստիկանության մարմիններում օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառման վերաբերյալ օրենսդրության կատարման նկատմամբ: Ամփոփում է մինչդատական քրեական վարույթի օրինականության, ինչպես նաև դատախազական հսկողության մյուս բնագավառների աշխատանքների կազմակերպման և իրականացման հարցերով ՀՀ գլխավոր դատախազի հրամանների և հանձնարարականների կատարման աշխատանքները, պատրաստում տեղեկանքներ, զեկուցագրերի նախագծեր, կազմում հաշվետվություններ:

2016 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև օրս ընկած ժամանակահատվածում Արմեն Օսեյանը հսկողություն է իրականացրել հետաքննության մարմինների ու ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչների կողմից հարուցված 506 քրեական գործի նախաքննության նկատմամբ, որոնցից 75-ն ուղարկվել է դատարան, 136-ի վարույթը կարճվել է, 110-ը՝ կասեցվել, 21-ը ուղարկվել է ըստ ենթակայության, 81-ը միացվել է այլ գործերի, իսկ 83 քրեական գործի նախաքննությունն ընթացքի մեջ է: 65 գործով դատարանում պաշտպանել է մեղադրանքը, որոնցով կայացվել են մեղադրական դատավճիռներ, իսկ 26 քրեական գործ դատաքննության ընթացքի մեջ են:

Դատավարական հսկողություն է իրականացրել 1109 նյութի նկատմամբ: Ա. Օսեյանը ընթացք է տվել 200 դիմում-բողոքների, կատարել է շուրջ 50 քաղաքացու ընդունելություն:

Անցած ժամանակահատվածում Ա"Օսեյանը Արմավիրի մարզի դատախազության աշխատանքի ծրագրի համաձայն կատարել է թվով 4 ուսումնասիրություն և վերլուծություն:

2020 թվականին հսկողություն իրականացրած քրեական գործերով տվել է 30-ից ավել գրավոր ցուցումներ:

2020 թվականին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտերի դեմ բերել է 6 վերաքննիչ բողոք:

Արմեն Օսեյանը տիրապետում է հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և տակտիկային: Տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը: Օժտված է կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ ընդունակություններով, պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է և կարգապահ, բարեխիղճ է, ընկերասեր, վայելում է աշխատանքային կոլեկտիվի հարգանքը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Արմեն Օսեյանը խրախուսվել է 2 անգամ, կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Արմեն Օսեյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Անցկացնել Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազ Արմեն Գառնիկի Օսեյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ